ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 9—16 սուրբ Էջմիածին այցելեցին Անթիլիասի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչները և նոյեմբերի 10—12 օրերին բարեկամական մթնոլորտում չորս հանդիպումներ ունեցան Մայր Աթոռի ներկայացուցիչների հետ:

Մայր Աթոռի ներկայացուցիչներն էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը՝ հայրապետական պատվիրակ հայոց Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ Փարիզի, տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը՝ առաջնորդ հայոց Վրաստանի, և պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը:

Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչներն էին տ. Տաճատ արքեպիսկոպոս Ուրֆալյանը՝ առաջնորդ հայոց Լիբանանի, տ. Արտավազդ եպիսկոպոս Թրթրյանը՝ տեսուչ կիլիկյան դպրեվանուց, տիար Վահե Սեթյանը՝ ատենապետ Ազգային ընդհանուր ժողովի, և տիար Խաչիկ Պապիկյանը՝ ատենապետ Ազգային կեդրոնական վարչության:

Կարծիքների փոխանակումից հետո Մայր Աթոռի ներկայացուցիչները կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներին հանձնեցին ամփոփ կերպով բանաձևված Մայր Աթոռի առաջադրանքները՝ վերահաստատելու համար հայ եկեղեցվո միության բնականոն վիճակը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

16-ը նոյեմբերի 1971 թ.,
Ս. Էջմիածին